

ԱՊԱԳԻՆՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2395 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍ 2023
• VOL. XLIII, NO 2395 • 17 JUILLET 2023 • MONDAY, 17 JULY 2023

KOMITAS
SALON FUNÉRAIRE

Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ԱՏՐՊԵՅՃԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՈՒ ԶԱՐՈՋՉԱԿԱՆ ՀՈՂ ԿԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՀԱՍԱՐ



Արցախի Արտաքին Գործոց Նախարարությունը յայտարարություն տարածած է Ատրպեյճանի կողմէն ռազմատենչ ու յարձակողական հռետորաբանության աշխուժացման մասին: Յայտարարության մէջ ըստաւ է.

«Վերջին շրջանին Ատրպեյճանի պետական կառոյցներն ու կառավարութեան կողմէն վերահսկուող լրատուամիջոցները լայնածաւալ ապատեղեկատուական արշաւ սկսած են՝ նըպատակ ունենալով մոլորեցնել միջազգային հանրութիւնը եւ պատրուակ ստեղծել Արցախի Հանրապետութեան եւ անոր ժողովուրդին դէմ նոր յարձակումին համար: Արցախի Պաշտպանութեան բանակին մասին յօրինելով եւ յառաջ մղելով կեղծ խօսոյթներ՝ Ատրպեյճան, ըստ էութեան, ժխտած է Արցախի ժողովուրդի ինքնապաշտպանութեան անքակտելի իրաւունքը եւ կը ձգտի զայն զրկել սեփական անվտանգութեան ապահովման բոլոր միջոցներէն եւ կարելիութիւններէն՝ Պաքուի կողմէն Արցախի խաղաղ բնակչութեան դէմ մշտական սպառնալիքներու եւ զինուորական սադրանքներու պայմաններուն տակ:

Հակառակ այն հանգամանքին, որ Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահ զօրախումբը արցախեան կողմէն հրադարարի խախտում երբեք չէ արձանագրած՝ պաշտօնական Պաքուն կը շարունակէ իր դիրքերը գնդակոծելու մասին կեղծ մեղադրանքներ ներկայացնել Արցախի Պաշտպանութեան բանակի հասցէին եւ միեւնոյն ատեն սաստկացնել յարձակողական ու ռազմատենչ հռետորաբանութիւնը՝ անով իսկ տեղեկատուական եւ քարոզչական հող նախապատրաստելով Արցախի Հանրապետութեան դէմ նոր յարձակումի համար: Անոր մասին կը վկայէ նաեւ այն փաստը, որ Ատրպեյճանի իշխանութիւնները կը շարունակեն հետետողականօրէն մերժել

Շար. - էջ 2

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱԽՕՍԱԶՐՈՅՑ ՈՒՆԵՅԱԾ Է ԷՆԹԸՆԻ ՊԼԻՆԵԸՆԻ ՀԵՏ

Երեքշաբթի՝ 11 Յուլիս 2023-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ պետքարտուղար Էնթընի Պլինքընի հետ:

Ինչպէս «Արմէնփրէս»-ին տեղեկացուցին ՀՀ կառավարութենէն, զրուցակիցները անդրադարձած են տարածաշրջանի մէջ հաստատուած կացութեան, Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի շուրջ ընթացող բանակցութիւններուն, Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման համար անհրաժեշտ քայլերուն, ներառեալ Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան անհրաժեշտութեան՝ միջազգային գործընկերներու ներգրամամբ:

Վարչապետ Փաշինեան անդրադարձած է Ատրպեյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդկային ճգնաժամի խորացմանը եւ այն յաղթահարելու անհրաժեշտ քայլերուն:

Զրուցակիցները ընդգծած են տարածաշրջանի կայունութեան ու խաղաղութեան ապահովման ուղղութեամբ հետետողական ջանքերու անհրաժեշտութիւնը:

Վարչապետ Փաշինեան վերահաստատած է ՀՀ կառավարութեան հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին:



ԵԱՀԿ-Ի ԽՈՐԻՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ «ՎԱՆՔՈՒՎԸՐԻ ՀՈՉԱԿԱԳԻՐ»-Ը ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ԿՈՉ Կ՛ՈՒՂԸ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՅՔՈՎ ՍԱՐԴՈՑ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի 2023 թուականի եզրափակիչ փաստաթուղթը՝ Երեքշաբթի՝ 4 Յուլիս 2023-ին, որդեգրուած Վանքուվըրի հրոշակագիրը Ատրպեյճանին կոչ կ'ուղղէ զինեալ ուժերը դուրս բերելու Հայաստանի գերիշխան տարածքէն, ապահովելու մարդոց եւ ապրանքներու անխոչընդոտ անցումը Բերձորի միջանցքով՝ համաձայն Արդարադատութեան միջազգային դատարանի 22 Փետրուարի որոշումին, նաեւ Ատրպեյճանին կոչ կ'ուղղէ՝ միջազգային ընտանիքին հետ սերտ համագործակցութեամբ դրական օրակարգ ձեւաւորելու Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներն ու անվտանգութիւնը երաշխաւորելու նպատակով:



Հրոշակագիրը կոչ կ'ուղղէ նաեւ՝ ազատ արձակելու բոլոր պահուող անձերը եւ ճշդելու Լեռնային Ղարաբաղի տագնապի ընթացքին անհետ կորսուած բոլոր անձերու ճակատագիրները, պաշտպանելու շրջանի մշակութային ժառանգութիւնը եւ աջակցելու ակաճութեամբ գործընթացին:

Փաստաթուղթը կը խրախուսէ Հայաստանը եւ Ատրպեյճանը շարունակելու բանակցութիւնները համապարփակ խաղաղութեան համաձայնագրի ստորագրութեան ուղղութեամբ՝ հիմք ընդունելով իրարու տարածքային ամբողջականութեան ճանձնալը, կ'ողջունէ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան դիւանագիտական ջանքերը, որոնք կը նպաստեն Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ երկխօսութեան եւ փոխադարձ վստահութեան հարցին:

«ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովը ընդունեց Հայաստանի պատուիրակութեան բոլոր առաջարկները»: Այս մասին դիմատետրի վրայ գրած է Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մնայուն յանձնախումբի նախագահ, ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի պատուիրակութեան ղեկավար՝ Սարգիս Խանդանեան:

Աւարտին յիշենք, որ Գանատայի Վանքուվըր քաղաքին մէջ տեղի ունեցող ԵԱՀԿ-ի Խորհրդարանական վեհաժողովի ամառնային նստաշրջանին ընթացքին Խանդանեան նաեւ ընտրուած է վեհաժողովի ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ մարդասիրական հարցերու յանձնախումբի փոխնախագահ:

ՀՀ ՊՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԿՐԱԿ ԲԱՅԱԾ Է ՏԵՂԻ ԵՒ ՍԵՒ ԼԻՃԻ ՀԱՏՈՒԱԾԻ ՄԵՋ ՏԵՂԱԿԱՅՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ»

11 Յուլիսի 2023-ին՝ ժամը 17:35-ին, Ատրպեյճանի ՁՈՒ ըստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զէնքերէն կրակ բացած են Տեղի եւ Սեւ Լիճի հատուածի մէջ տեղակայուած հայկական դիրքերու ուղղութեամբ:



«Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ այդ մասին կը տեղեկացնեն ՀՀ պաշտպանութեան նախարարութենէն: Այլ մանրամասներ չեն հաղորդուած:

Ո՞ՒՄ ՎՐԱՅ Է ՄԵՐ ՅՈՅՍԸ. ՆՈՐԻՑ ՕՐՕՐՈՑԻՒՄ...

ՅԱԿՈՔ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Բնաւ պատահական չէ, որ դժնդակ այս օրերին մեր ժողովրդի մտապատկերում որպէս ապագայ հերոս ներկայանում է 8-9 տարեկան մի տղայ, ամենագէտ մի պատանեկիկ՝ Միքայէլ Յակոբեան անուն-ազգանունով: Հրաշամանուկը մեր, որ մեզնից շատ շատերի համար դարձել է վերջին յոյս, դէպի ապագայ ձգուող վերջին ապաւեն, տասնեակ հազարներով հետեւորդ ունի ֆէյսպուքեան իր էջում, աւելի մեծաթիւ հիացողներ՝ հեռուստատեսութեամբ ու համացանցային հեռուստաալիքներով:

Ամենագրաւիչը ոչ միայն նրա ուղեղիկի ծալքերում կուտակուած-դասաւորուած տարաբնոյթ գիտելիքներն են, այլեւ խոստումը, թէ մի օր «գաղտնի զէնք» է ստեղծելու, անշուշտ, աւելացնենք մեր կողմից, յաղթելու համար մեր թշնամիներին, ազատագրելու մեր երկիրը ու կերտելու հզօր Հայաստան:

Այս տեսլականը, որը ներկայանում է մանկահասակ մեր հերոսի կերպարանքով, դարերի ու հազարամեակների պատմութիւն ունի: Այն ուղիղ գծով մեզ կապում է առասպելական վիշապաքաղ մեր Վահագնին, որ ծնուեց, ինչպէս մեր Պատմահայրն է վկայում, երկրի ու երկնքի, ջրի ու կրակի երկունքից, որպէս խարտեաչ, հուր մագերով ու արեգակ աչքերով պատանեկիկ, որը սլանում է ընդդէմ վիշապ-թշնամիների:

Նոյն տեսլականը, այլ կերպարանքով, մենք տեսնում ենք մեր ժողովրդի պատմութեան հետագայ դարերում, յատկապէս օրհասական պահերին: Արաբական արշաւանքների ժամանակ մենք նրան հանդիպում ենք ի դէմս Սասունցի Դաւիթի, որն իր «գաղտնի զէնքով», այսինքն՝ կայծակէ թուրով, երկու կէս է անում թշնամուն՝ Մարայ Մելիքին, մինչ Առիւծ Միւրեղ, բազում քաջագործութիւններից յետոյ մտնում է քարանձաւ, որտեղից դուրս չի գալիս մինչեւ օրս: Բայց եթէ նա մի օր դուրս գայ քարէ ամրակուռ դռնից, գիտէք ինչքն է անելու...

Նոյն տեսլականի մէկ այլ դրսեւորմանը հանդիպում ենք օսմանեան ջարդերի, հալածանքների դէմ մեր անհաւասար պայքարի օրերին, երբ թուրքը «մեր յոյս թողեց օրօրոցին», որի դիմաց «խեղճ մշտեցին» «գարթիւր լաօ» էր երգում, իսկ դեռեւս պատանի Կիկոյի հայրիկը, որն ընդամենը մի եզ ունէր, այդ եզն անգամ «կու տար ծախու», որպէսզի «թուֆենք (հրացան) մ'առնէր իր Կիկոյին ու տանէր գրէր ֆետայի»...

Հիմա բոլոր վիշապները, օձերն ու սողունները հաւաք-

ւել են մեր գլխին, Պաքուի մեղքը, Անքարայի սուլթանը եկել են, «կուզեն ջնջել մեզի», մինչ ներսում ոչ Վահագն կայ, ոչ Միւրեղ, ոչ Դաւիթ, ոչ էլ Անդրանիկ ու Նժդեհ: Ներսում «գործի վրայ» են վախկոտ ու խռպոտ Ձէնով Օհանը, Յռան Վերգոն եւ միւս վախկոտներն ու ցռանները, բոլորն էլ զինուած սպիտակ դրօշներով:


Ում վրայ դնենք մեր յոյսը. կրկին օրօրոցի: Բայց հրաշամանուկը դեռ պէտք է մեծանայ, ուժ ու կորով հաւաքի, իր «գաղտնի զէնքը» սարքի: Իսկ մենք ժամանակ չունենք: Անհամբեր են վիշապները, օձերը, մողեսներն ու միւս սողունները: Անհամբեր են նաեւ ներսի սողունները, օր առաջ, ժամ առաջ յանձնել էլ յանձնուել են ուզում: Նրանք պատրաստ են յանձնել նաեւ մեր բոլոր հրաշամանուկներին անգամ: Ժողովրդի մի մասը, որը շփոթում է ամէն ինչ, արքայից արքայ Տիգրան Մեծին անգամ, պատրաստ է ենթարկուել: Միւս մասը, որը «չի սիրում քաղաքականութեամբ զբաղուել», պատրաստ է հեռանալ: Իսկ մնացեալ մասը, որը տառապում է անզօրութիւնից, սպասում է հերոսին, «գաղտնի զէնքով» գալիք հրաշամանուկին:

Ժամանակն է փոխելու մեր պատմութեան ընթացքը, հրաժարուելու հանդուրժելու, համբերելու, յուսալու եւ սպասելու դարաւոր մեր ամանդոյթից: Պատմահայրն է դարձեալ, որ մեզ սովորեցնում է, որ հակառակ դարերի ընթացքում արձանագրած ձայնողութիւնների, «բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, արժանի գրոց յիշատակի»: Արիութեան, քաջութեան, գործի ժամանակը հիմա է: Դատապարտուած ենք հզօր լինելու, ընդմիջու: Այլապէս ոչ ոք, Նոյնիսկ մեզ բարեկամ ներկայացողները, չեն թողնի, որ օրօրոցի մեր հրաշք մանուկները զարթնեն, վեր կենան, գաղտնի կամ յայտնի զէնք սարքեն: Հզօր զէնք սարքելու համար հզօր պետութիւն է պէտք: Փոքրիկ Միքայէլն ու մեր միւս հրաշամանուկներն իրենց խոստումը եւ մեր յոյսերը իրականացնելու համար պետական պաշտպանութեան կարիքն ունեն, աւելի ճիշդ՝ պիտի ունենան:

Իսկ ո՞վ է լինելու կամ ո՞վքեր, որ փոխելու են մեր պատմութեան ընթացքը:

տարարութիւն՝ ապակառուցողական գործողութիւններու անթոյլատրելիութեան եւ բոլոր վիճելի հարցերը կառուցողական երկխօսութեան միջոցով լուծելու անհրաժեշտութեան մասին: Այս առումով անընդունելի կը համարենք, որ միջազգային հանրութիւնը եւ, մասնաւորապէս, Ռուսիոյ Դաշնութիւնը, որուն խաղաղապահ զօրախումբը տեղակայուած է Արցախի մէջ եւ որուն անվտանգութեան երաշխիքներով 2020 թուականի պատերազմէն յետոյ տասնեակ հազարաւոր արցախցիներ վերադարձած են հայրենիք, առանց պատշաճ ուշադրութեան եւ արձագանգի ձգեն Ատրպէյճանի սպառնալիքները:

Այս առնչութեամբ կրկին կ'ընդգծենք, որ միջազգային հանրութեան պատասխանատու անդամները եւ, մասնաւորապէս, խաղաղ գործընթացի մէջ ներգրաւուած բոլոր դերակատարները պէտք չէ անտեսեն եւ աւելի եւ՛ որոշակի յայտարարութիւններով խրախուսեն Ատրպէյճանի կողմէն իր միջազգային պարտաւորութիւններու խախտումները, Արցախի ժողովուրդին դէմ իրականացուող ցեղային զտումներու քաղաքականութիւնը, որ կրնայ վերաճել աւելի լայնածաւալ յանցագործութեան: Համոզուած ենք, որ միայն Ատրպէյճանի գործողութիւններու պատշաճ եւ միանշանակ քաղաքական արժեւորումը, ինչպէս նաեւ միջազգային հանրութեան կողմէն Ատրպէյճանի միջազգայնօրէն հակահրապարակական գործողութիւններու կանխումը ուղղուած յստակ եւ արդիւնաւետ միջոցներու ձեռնարկումը թոյլ կու տան պայմաններ ստեղծելով Արցախի ժողովուրդի իրաւունքներուն ու անվտանգութեան ապահովման եւ տարածաշրջանի մէջ խաղաղութեան ու կայունութեան հաստատման համար»:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱՏԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՍԵ Է ԼԱԳԻՆԻ ՄԻՋԱՆՃՔՈՎ ԱՆՍԱԾԱՆ ՏԵՂԱՆԳՐԸ ԵՐԱՇԽԱՌԲԵԼՈՒ ՊԱՐՏԱՌԵՅՆՈՂ ՈՐՈՇՈՒՄԸ

Հինգշաբթի՝ 6 Յուլիսին Արդարադատութեան Միջազգային Դատարանը տուած է որոշում ցեղային խտրականութեան բոլոր ձեւերով վերացման մասին հռչակագիրի ծիրին մէջ քննուող Հայաստանն ընդդէմ Ատրպէյճանի գործով իր՝ 22 Փետրուար 2023-ի միջանկեալ խնդրանքին վերաբերեալ, որ պայմանաւորուած էր Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքին մէջ անցակէտ տեղադրելու փաստով:

Դատարանը վերահաստատած է իր 22 Փետրուար 2023-ի որոշումը, որով Ատրպէյճանին պարտաւորեցուցած էր՝ ձեռնարկելու բոլոր միջոցները երաշխաւորելու Լաչինի միջանցքով քաղաքացիներու, փոխադրամիջոցներու եւ բեռներու՝ երկու ուղղութիւններով անխափան տեղաշարժը, ան գըտած է, որ այս պահուս չկայ իր 22 Փետրուար 2023 թուականի որոշումը լրացնելու անհրաժեշտութիւնը:

ԱԳԱԿԷՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱՒԵՏԻՍ ԳՎԳՈՒՆԵԱՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԸ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada



ԱՏՐՊԵՅՃԱՆ ...

Շաբ. - էջ 1- ԷՆ

առաջարկները՝ Արցախ՝ Լաչինի միջանցք ուղարկել միջազգային փաստահաւաք առաքելութիւն, որ կը կարենայ տեղույն գնահատել իրավիճակը եւ միջազգային հանրութեան ներկայացնել իրականութեան առարկայական պատկերը:

Արցախի նկատմամբ նման անթաքոյց ռազմաքաղաքական սպառնալիքը՝ հրադադարի դրութեան շարունակական խախտումները, ցեղային ատելութեան եւ խտրականութեան հրահրումն ու քարոզչութիւնը, հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացումը, երթեւեկայիկ եւ ուժանիւթի ամբողջական շրջափակումը, ինչպէս նաեւ Լաչինի միջանցքին մէջ ատրպէյճանական հսկիչ անցակէտի ապօրինի տեղադրումը անընդունելի են եւ կը հանդիսանան 9 Նոյեմբեր 2020-ի Եռակողմ յայտարարութեամբ Ատրպէյճանի ստանձնած պարտաւորութիւններուն, ինչպէս նաեւ Արդարադատութեան միջազգային դատարանի 22 Փետրուար 2023-ի որոշման կոպիտ խախտում:

Ակնյայտ է, որ Ատրպէյճանի յարձակողական եւ ապակայունացնող գործողութիւնները նպատակ ունին նաեւ թոյլ չտալ, որ ստեղծուին պայմաններ կողմերու միջեւ հաւասարութեան ու բարեխղճութեան վրայ հիմնուած կառուցողական երկխօսութեան եւ հակամարտութեան կարգաւորման խաղաղ գործընթացի վերսկսումին համար:

Լիակատար անպատժելիութենէն եւ ամենաթողութենէն ոգեւորուած՝ Ատրպէյճանի իշխանութիւնները հաշիւի չեն առնէր միջազգային հանրութեան ոչ մէկ կոչ ու յայ-

ԵԳԻՊՏԱԿԱՅ ՏՂԱԲԸ ԱՐԱՐԱՏ ԼԵՐԱՆ ԳԱԳԱԹԸ ՀԱՍԱՆ



Օրերս եգիպտական, հայրենի եւ սփիւռքի լրատուական միջոցները ողողւեցան եգիպտահայ հինգ երիտասարդներու արձանագրած բացառիկ նուաճումով:

Սարո Երզնկացեան, Արի Երզնկացեան, Վարուժան Գազանճեան, Սիմոն Տեփոյեան ու Շահան Թերզիպաշեան. ահա՛ եգիպտահայ մեր տղաքը, որոնք նախաձեռնեցին, կազմակերպեցին եւ յաջողութեամբ հասան Արարատ լեռան գագաթը եւ հոն հպարտութեամբ բարձրացուցին Հայաստանի եւ Եգիպտոսի դրոշները:

Բոլորս գիտենք, որ Արարատ լեռը վաղուց գայթակղիչ բարձունք մը եղած է շատերու եւ ինչ խօսք՝ առաւելապէս Սրբազան լեռան իրողութեամբ ապրող հայերուն համար: Ընդհէ, բոլորս ալ քիչ թէ շատ կրնանք ենթադրել հազարաւոր մեթրեր մագլցողներուն հանդիպած դէպքերն ու դժուարութիւնները, բայց այնուամենայնիւ, որոնք համար հետաքրքրական չէ գիտնալ, թէ այս երիտասարդները են, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս մտայղացան այս յանդուգն գաղափարը եւ անցան իրագործման ճանապարհ:

Անմոռանալի արկածախնդրութիւն, երկար ճանապարհագնացութիւն եւ յիշատակելի փորձառութիւն մը, որուն մասին, անկասկած, դեռ երկար կը պատմեն այս տղաքը դեռեւս իրենց թոռներուն...

Ապրիլ տղաք:

Նորանոր բարձունքներ նուաճէք եւ փայլուն յաջողութիւններ արձանագրէք: Հպարտ ենք ձեզմով:

Կը շնորհաւորենք նաեւ մեր խիզախ երիտասարդներուն ծնողները, ազնիւ մայրերն ու հայրերը, որոնց ցանած հայեցի բարի սերմերը իրենց գաւակներուն հոգիներուն մէջ ջերմացնող խինդ են, այսօր, եւ լուսաւոր կայծ:

Այո՛, աւելի քան երբեք, այսօր կարիք ունինք գիտակից, հաւատաւոր հայ միտքերու, խանդավառ հոգիներու եւ անմար կայծով յառաջ շարժողներու...

«ԱՐԵՒ» Հաբաթաթերթ

ԳԵՂԱՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ. «ՏԱՐԱԿՈՒՄԱՆԸ Կ'ԱՌԱՋԱՅՆԷ՝ ՀՅՈՒՄ ԱՆ ԱՐՑԱԽԸ ՓՈԽԱՐԻՆԱԾ Է ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՎ»

Հայաստանի հանրային հեռուստատեսութեան լուրերու թողարկման ժամանակ կ'օգտագործուի բացառապէս Լեռնային Ղարաբաղ անուանումը, որ անկեղծօրէն տարակուսանք կ'առաջացնէ, որովհետեւ մինչեւ վերջերս մշտապէս կ'օգտագործուէր Արցախ անուանումը: Այս մասին Facebook-ի իր էջին վրայ գրած է Արցախի Մարդու իրաւունքներու Պաշտպան Գեղամ Ստեփանեան:



«Արցախի ժողովուրդը ի հարկէ չի հրաժարիր Լեռնային Ղարաբաղ եզրոյթէն, աւելին, ԱՆ սահմանադրութեան համաձայն՝ Արցախի Հանրապետութիւն եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն անուանումները նոյնական են:

Այնուամենայնիւ Հայաստանի հանրային հեռուստաընկերութիւնը հանրապետութիւն բառը շատոնց չ'օգտագործէր, հիմա ալ զարմանալիօրէն Արցախը փոխարինած է Լեռնային Ղարաբաղով, այն պարագային, երբ օրինակ միջազգային լրատուական խումբի մաս կազմող Ազատութիւն եւ Սփութիք Արմենիա լրատուականները կ'օգտագործեն Արցախ անուանումը:

Եթէ խնդիրը միջազգային դերակատարներուն աւելի հասկնալի ըլլալուն մէջ է, ուստի նախ կը կարծեմ Արցախ անուանումը հարցով հետաքրքրուած դերակատարներուն կողմէ արդէն իսկ հասցուցած է ճանաչելի եւ ընկալելի դառնալ, եւ երկրորդ՝ արդեօք հնարաւոր չէ գոնէ օգտագործել երկու անուանումներն ալ զուգահեռ՝ Արցախ (Լեռնային Ղարաբաղ):

Յաճախ միջազգային լրատուադաշտի ներկայացուցիչները Լեռնային Ղարաբաղին զուգահեռ կ'օգտագործեն Արցախ անուանումը՝ յարգանք դրսեւորելով տեղացիներուն հանդէպ, որովհետեւ միջազգային իրաւունքը տեղանուններն ու աշխարհագրական անուանումները չի համարեր պետութիւններու սեփականութիւն, այլ կը համարէ ժողովուրդներու ոչ նիւթական ժառանգութիւն»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԵՑ ՀԲԸՄ-Ի ՏԱՐԲԵՐ ԾՐԱԳՐԵՐՈՒ ՍՓԻՌԵԱԿԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ



Յուլիս 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) «Կլոպալ առաջնորդութեան» եւ «Երաժշտական Հայաստան» ծրագրերու մասնակից սփիւռքահայ երիտասարդ ուսանողներուն ու երաժիշտներուն, ինչպէս նաեւ Մոնթրէալի (Գանատա) սկաուտական խումբին՝ ուղեկցութեամբ ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կեդրոնական վարչութեան անդամ Վազգէն Եագուպեանի:

Հանդիպման ընթացքին, տիար Եագուպեանը Նորին Սրբութեանը տեղեկացուց, որ շուրջ 35 սփիւռքահայ երիտասարդներ Հայաստան ժամանած են հարստացնելու իրենց գիտելիքները հայոց լեզուի, հայկական երգարուեստի բնագաւառներու մէջ, եւ մօտէն ծանօթանալու հայկական մշակոյթին ու պատմութեան եւ զօրացնելու իրենց կապը մայր հայրենիքի հետ:

Հայոց Հայրապետը, իր գնահատանքը բերելով ՀԲԸՄ-ին նման նախաձեռնութեան համար, կարեւոր նկատեց սփիւռքի երիտասարդ հայորդիներու այցը Հայաստան, յատկապէս այս դժուարին օրերուն, որպէսզի վերջիններս հաղորդակից ըլլան ոչ միայն հայրենիքի հոգեւոր ու մշակութային արժէքներուն, այլեւ երկրի մէջ տիրող իրավիճակին, Արցախի մէջ ստեղծուած մարդկային ճգնաժամին եւ առկա անվտանգային խնդիրներուն: Այս առնչութեամբ Նորին Սրբութիւնը յորդորեց երիտասարդներուն հայրենասիրական զգացումի նոր լիցքերով քաջալերուած վերադառնալ իրենց երկիրները եւ նախանձախնդրօրէն ամէն ջանք ի գործ դնեն նպաստելու հայ ժողովրդի առջեւ ծառայած մարտահրաւիրներու յաղթահարման:

Հայոց Հովուապետը պատգամեց, որ հայորդիները իրենց գիտելիքներով եւ երիտասարդական արոյնով աջակցին իրենց համայնքներու առաւել զօրացմանն ու միասնականութեան կերտումին՝ ազգային ինքնութիւնը պահպանելու եւ հայրենիքին օգտաշատ ծառայութիւն բերելու համար:

Հանդիպման ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ սփիւռքահայ երիտասարդներու հարցերուն, որոնք կ'առնչուէին հայկական համայնքներուն, Արցախին եւ Հայաստանի առկա դժուարութիւններու յաղթահարման ուղիներուն:

Վերջաւորութեան, Նորին Սրբութիւնը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց հայորդիներուն:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԵԹԷ ՎԱՐՂԱՆ ՕՍԿԱՆԵԱՆՆ ՈՒ ՄԻ ԽՈՒՄԲ ԴԻՎԱՆԱԳԷՏՆԵՐ ՎԱՐԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԻՍԿ ՓԱՇԻՆԵԱՆԸ ԼՈՒ, ԿԱՐՈՂ Է ԻՐԱՎԻՃԱԿ ՓՈԽՈՒԵԼ»

«Իհարկէ, ծանր է վիճակը, դժուարութիւնները շատ են, փրոպլէմները մեծ են, բայց չեմ համարում, որ անելանելի վիճակ է: Եթէ կարողանան պայմանաւորուել մի խումբ դիւանագետներ Վարդան Օսկանեանի գլխաւորութեամբ, աշխատել, իսկ մնացածը լռեն, կարող է փոփոխութիւններ լինեն: Թէեւ ես չեմ կարծում, որ այդ մարդիկ կարող են լռել»,- լրագրողների հետ ճեպագրոյցի ընթացքին ըսած է երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը՝ անդրադառնալով ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանի յայտարարութեան, թէ կարող է իրավիճակ փոխել, եթէ բանակցողը փոխուի:



Սերժ Սարգսեանը նոյնպէս այդ կարծիքին է, որ եթէ բանակցողը փոխուի, Արցախի հարցին կարելի է իրավիճակը փոխուի:

Յիշեցնենք, որ Վարդան Օսկանեանն մի քանի օրեր առաջ լրագրողներու հետ հարցազրոյցին ըսած է, որ եթէ իրեն 100 տոկոսով լիազօրութիւն տրուի, եւ 3 ամիս Փաշինեանը լռէ, ընդհանրապէս ոչինչ չխօսի, ինքն ու մի խումբ դիւանագետներ կարող են բանակցութիւնները շարունակել եւ իրավիճակը փոխել:

ՀԱՅ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԴԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՍ Ա. ՆԱԽԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ

Ամբողջ եւրոպական մշակույթը ինքնիրեն կը համարէ անթիք յունական եւ հռոմէական քաղաքակրթութիւններուն ժառանգորդը, չհասկնալով, որ երկուքն ալ կը սերին հին հայկական քաղաքակրթութենէն: Նենրի Շլիման

Դպրոցէն, այնուհետեւ համալսարանէն ներս ուսանած տարիներուն Հայաստանի Հանրապետութեան անկախութեան օրը կը նշուէր 1920-ի Նոյեմբեր 29-ին, իսկ 1991-ի վերանկախութենէն յետոյ՝ 1918-ի Մայիս 28-ին: Պատմագիտութիւն ուսումնասիրելուս ընթացքին այս հարցին վերաբերեալ հանդիպեցայ որոշ տարակարծութիւններու, սակայն անոնք նեղ մասնագիտական հարցեր են: Այսօր պաշտօնապէս ընդունուած է Մայիս 28-ը: Անկախութիւնը մեծագոյն արժէք է, որը մեր օրերուն վտանգըրուած է եւ զայն պահպանելու համար անհրաժեշտ է ներդնել բոլոր հնարաւորութիւններն ու միջոցները:

Իրաքանչիւր պետութեան կարեւոր բնութագրիչներէն է զայն հարեան երկիրներէն գատող սահմաններուն առկայութիւնը: Իսկ այսօր, այլ հիմնախնդիրներուն զուգահեռ, մեր թշնամիները ոտնձգութիւններ կը կատարեն Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն նկատմամբ: 44-օրեայ պատերազմին քանի մը թշնամաբար տրամադրուած երկիրներու (Թուրքիա, Փաքիստան, Իսրայէլ) օգնութեամբ Հայաստանին յաղթած Ատրպէյճանի իշխանութիւնները, չբաւարարուելով հսկայածաւալ տարածքներու եւ այլ արժէքներու նուաճումով, այժմ ալ պատմութիւն հնարելով ու արհեստածին այլ պատրուակներ վկայակոչելով՝ յաւակնութիւններ կը յայտնեն Հայաստանի տարածքներուն նկատմամբ: Ինչպէս կարգաւորելու համար ստեղծուած են սահմանագատման եւ սահմանագծման երկկողմ յանձնախումբեր, որոնց հանդիպումներուն ընթացքին ազդրիները յաճախ կը ներկայացնեն անհեթեթութեան հասնող առաջարկ-պահանջներ: Թերթային յօդուածի թոյլատրելի սահմաններուն մէջ փորձենք հակիրճ ներկայացնել հիմնախնդիրն ու անոր արմատները:

Սկսինք այս կէտէն, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տարածքային վեճերն ու միմեանց նկատմամբ տարածքային յաւակնութիւնները սկիզբ առած են 1918-էն: Մայիս 26-ին Անդրկովկասեան Դեմոկրատիկ Դաշնային Հանրապետութիւնը փլուզուեցաւ եւ յաջորդաբար հռչակուեցան Վրաստանի (Մայիս 26-ին), Ատրպէյճանի (Մայիս 27-ին) եւ Հայաստանի (Մայիս 28-ին) հանրապետութիւնները: Ի դէպ, Անդրկովկասեան Նորանկախ հանրապետութիւններուն միջեւ ազգամիջեան յարաբերութիւնները մշտապէս լարուած էին, սուր բնոյթ կը կրէին եւ քայլ-քայլ ալ պատերազմներու կը վերածուէին: Գլխաւոր խնդիրը եւ բարդութիւնը կապուած էր սահմանային հարցերուն հետ: Ըստ Հայաստանի եւ Հարաւային Կովկասի պատմական քարտեզներու մասնագետ Ռուբէն Գալչեանի, այդ շրջանի քարտեզները կը վկայեն, որ դեռեւս այդ ժամանակներուն Ատրպէյճանը յաւակնոտ ծրագիրներ ունէր եւ կը յայտարարէր, որ իրեն կը պատկանին Ղարաբաղը (Արցախ), Ջանգեզուրը (Սիւնիք), ինչպէս նաեւ Քելբաջարի (Քարվաճառ) եւ Լաչինի (Բերձոր) շրջանները: Ոչ միայն կը յայտարարէր, **այլեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի անկախութիւններու հռչակումէն յետոյ բազմիցս փորձեր կը ձեռնարկէր Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Ջանգեզուրը, ուր հիմնականօրէն կ'ապրէին հայերը, գրաւելու, որ 1920-ին յաջողեցաւ, երբ սկսաւ Անդրկովկասի խորհրդայնացման գործընթացը:**



Մոսկուան՝ միջնորդ 1920-30-ական թուականներուն եւ այսօր
Նոյն տարուայ ամռանն այդ խնդիրը կարգաւորելու նպատակով Անդրկովկասեան երեք հանրապետութիւններու պատուիրակութիւնները հրաւիրուեցան տարածաշրջանին մէջ գերիշխող դիրք ունեցող Օսմանեան

կայսրութեան մայրաքաղաք Կ. Պոլիս, ուր սահմաններու հարցով պէտք է խորհրդածողով կայանար: Նկատենք, որ 1918-ի Մայիս-Հոկտեմբեր շրջանին մէկ կողմէն Քառեակ Միութիւնը, որուն մաս էր Օսմանեան կայսրութիւնը, միւս կողմէն՝ Նորանկախ Հայաստանը, Վրաստանը եւ Ատրպէյճանը, դաշնակիցներ էին:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Խատիսեան այդ մասին յուշագրած է, որ երբ ատրպէյճանական պատուիրակութիւնը բացաւ Ելիզաւէթփոլի մէջ (պատմական Գանձակ, այսօր՝ Գիանջա, որ մինչեւ Պաքու տեղափոխուելը, 1918-ի Յունիս-Սեպտեմբեր հատուածին մէջ Ատրպէյճանի մայրաքաղաքն էր) գծուած քարտեզը, պարզուեցաւ, որ հայկական գաւառներու մեծ մասը պէտք է Ատրպէյճանի մաս կազմէին: Նոյն կերպ, երբ հայկական պատուիրակութիւնը սեղանին կը փռէ Թիֆլիսի մէջ (Հայաստանի կառավարութիւնը դեռ չէր ժամանած Երեւան) գծած քարտեզը, ատրպէյճանցիները կը տեսնեն, որ հայերը կը յաւակնին Ելիզաւէթփոլի նահանգի մեծ մասին: Ընդհանուր առմամբ, Կ. Պոլսոյ խորհրդածողովը սահմանային որեւէ հարց չլուծեց: Որոշ ժամանակ անց սակայն, այն բանէն յետոյ, երբ Օսմանեան կայսրութիւնը իրեն պարտուած ճանչցաւ Առաջին աշխարհամարտին եւ զօրքերը դուրս բերաւ հայկական գաւառներէն, 10 հազար քառակուսի քիլոմետր տարածութեան վրայ հռչակուած Հայաստանի Հանրապետութիւնը 1918-ի աշնան ընդարձակուեցաւ:

1919-ի գարնան ու ամրան բրիտանացիներու զինական եւ անմիջական օգնութեամբ Հայաստանին միացան նաեւ Կարսն ու Նախիջեւանը: Սակայն Հայաստանը Կարսը կրցաւ պահել մինչեւ 1920-ի Հոկտեմբեր, իսկ Նախիջեւանը՝ ընդամենը երկու ամիս:



Նորաստեղծ Ատրպէյճանի եւ Հայաստանի հանրապետութիւնները երկար կեանք չունեցան: Անկախութենէն ընդամենը երկու տարի անց անոնք ալ խորհրդայնացան: Խորհրդային իշխանութեան հաստատումէն յետոյ Ատրպէյճանի ժամանակաւոր յեղափոխական կոմիտէն (այդ ժամանակ հիմնական պոլշեփկեան ղեկավար մարմինը) յայտարարեց, որ «վիճաբարոյց տարածքները», այն է՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը, Հայաստանի անբաժանելի մաս կը կազմեն, քանի որ հիմնականօրէն բնակեցուած են հայերով: Այդ որոշումը հրապարակուեցաւ Մոսկուայի, Պաքուի եւ Երեւանի թերթերուն մէջ եւ վերահաստատուեցաւ Իոսիֆ Սթալինի կողմէն՝ 1921ի Յունիսին Պաքու կատարած այցի ժամանակ: Սակայն մէկ օր անց Սթալինի ուղղակի միջամտութեամբ որոշումը վերանայուեցաւ. Ղարաբաղը ընդգրկուեցաւ Խորհրդային Ատրպէյճանի կազմին մէջ եւ միայն անոր մէկ մասին վրայ ստեղծուեցաւ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը:

Նախիջեւանը (որ Ռուսական Կայսրութեան օրօք մտած էր Երեւանի (Էրիվանի գաւառի մէջ) նոյնպէս բռնակցուեցաւ Ատրպէյճանին՝ ստանալով ինքնավար հանրապետութեան կարգավիճակ:

1919թ. Փարիզի խաղաղութեան խորհրդածողովին մէջ Հայաստանն ու Ատրպէյճանը ներկայացուցին քարտեզներ, որոնց միմեանց հանդէպ տարածքային պահանջներն ու յաւակնութիւնները պահպանուած էին: Ինչպէս Կ. Պոլսոյ մէջ, այնպէս ալ Փարիզի մէջ Վրաստանը տարածքային հաւակնութիւններ ներկայացուցած էր եւ Ատրպէյճանին, եւ Հայաստանին ճիշդ այնպէս, ինչպէս Հայաստանն ու Ատրպէյճանը ներկայացուցած էին Վրաստանին: Ատրպէյճանի ներկայացուցած քարտեզին մէջ Ատրպէյճանը յաւակնած էր Ջանգեզուրին, Նախիջեւանին, Կարսին, Տաւուշին, Սեւանի արեւելեան ափին եւ այլ տարածքներու, որոնց գրեթէ նոյնութեամբ իր բոցաշունչ ելոյթներուն մէջ այսօր կը կրկնէ Ալիեւը: Ի դէպ, Հայաստանի տարած-

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 17 JUILLET 2023

Les efforts audacieux d'un blogueur russo-israélien pour soutenir l'Arménie et l'Artsakh

Écrit en anglais par Harout Sassounian, éditorialiste du California Courier et publié le 26 juin 2023

Je viens de lire un article très important paru dans l'Armenian Mirror-Spectator dans lequel Aram Arkun questionnait le blogueur russo-israélien Aleksander Lapshin qui est actuellement en tournée au Canada et aux États-Unis. Il a déjà rencontré des Arméniens à Toronto, Canada, le 3 juin dernier, et à New York le 11 juin. Il a également rencontré les organismes comme Human Rights Watch, Amnesty International et le Comité pour la protection des journalistes afin de les informer de la situation désastreuse en Artsakh.



Lapshin est né en Russie et a déménagé en Israël à l'âge de 13 ans. Sa femme est originaire de Moldavie et a déménagé en Israël il y a 14 ans. Cependant, elle attend depuis 2017 l'approbation afin de devenir citoyenne d'Israël.

Au cours de ses nombreuses visites en Arménie, il s'est rendu trois fois en Artsakh de 2011 à 2016. Le gouvernement azerbaïdjanais a émis un mandat d'arrêt contre lui et a demandé à la Biélorussie de l'envoyer à Bakou pour « traverser illégalement la frontière azerbaïdjanaise » à partir de l'Arménie. La Biélorussie l'a extradé vers l'Azerbaïdjan en 2017 où « il a été condamné à trois ans de prison, mais a été gracié en septembre et renvoyé en Israël après ce qu'il décrit comme une tentative d'assassinat en prison par quatre hommes masqués. Le gouvernement azerbaïdjanais a cependant affirmé qu'il avait tenté de se suicider », a rapporté Arkun.

Lapshin a déclaré que l'Agence de sécurité israélienne l'avait exhorté à plusieurs reprises à cesser de soutenir l'Arménie parce que « l'Azerbaïdjan est notre allié ». Il lui a également été conseillé de retirer ses plaintes contre l'Azerbaïdjan auprès de la Cour européenne des droits de l'homme et des Nations unies. Lapshin leur a répondu : « Non, pas question. J'irai jusqu'au bout et je gagnerai ».

Le 21 mai 2021, la Cour européenne des droits de l'homme a statué en faveur de Lapshin dans son procès contre l'Azerbaïdjan pour tentative de meurtre, torture et emprisonnement illégal. Cependant, l'Azerbaïdjan a refusé de lui verser l'indemnité de 30 000 euros. « Entre-temps, le Comité des droits de l'homme des Nations unies a adopté une résolution le 19 juillet 2022 condamnant les autorités biélorusses pour avoir illégalement arrêté Lapshin et l'avoir extradé vers l'Azerbaïdjan », a écrit l'Armenian Mirror-Spectator.

Lapshin a déclaré à l'Armenian Mirror-Spectator qu'en raison de ses critiques, il ne peut ni se rendre en Russie et ni dans les ex-républiques soviétiques, « sauf en Arménie », mais a ajouté : « Je viens de dire sauf l'Arménie, mais qui sait ? L'Arménie est sous une énorme influence russe ».

« Lapshin continue de poursuivre sa propre action contre les violations des droits de l'homme par l'Azerbaïdjan, mais s'engage également à aider l'Arménie. Il a compris, a-t-il dit, que « ce serait mieux pour moi, ma famille et pour notre sécurité, de laisser ça de côté et de continuer notre ancienne vie ». Cependant, il a poursuivi : « Je ne peux tout simplement pas abandonner ce que je fais en faveur de l'Arménie et de l'Artsakh parce que j'ai beaucoup d'amis en Arménie. Certains d'entre eux ont été tués pendant la seconde guerre du Karabagh. En fait, j'aime ce pays, donc je me sens en Arménie comme dans ma seconde demeure », rapporte Arkun. Lapshin a ajouté : « Regardez, six millions de Juifs ont été tués pendant l'Holocauste. De nombreux Arméniens ont en fait soutenu les Juifs et leur ont sauvé la vie. Donc, je ressens la même chose ».

Lapshin a déclaré à l'Armenian Mirror-Spectator : « Bien sûr, je ne reçois aucun soutien du gouvernement arménien ». De plus, le fait que l'Arménie, confrontée à une menace existentielle, tente de signer un accord de paix avec l'Azerbaïdjan et la Turquie, semble créer des motivations compliquées. « Même certains politiciens arméniens ont essayé de me convaincre de les laisser de côté, pour des raisons politiques. Ce que je fais contre l'Azerbaïdjan, d'une certaine manière, va à l'encontre des intérêts nationaux du gouvernement arménien actuel... Je me sens donc un peu seul dans ce combat, mais cette fois, heureusement, j'ai beaucoup d'amis, à la fois des amis arméniens et des amis américains et européens, qui me soutiennent réellement ».

« Pendant son séjour en Arménie, Lapshin a rencontré plusieurs anciens prisonniers de guerre qui ont été violés en prison [à Bakou] et a essayé de les convaincre de l'accompagner aux États-Unis et en Europe pour témoigner à ce sujet, mais, a déclaré Lapshin, ils se sentaient mal à l'aise de parler ouvertement de telles expériences en raison des normes sociales ou de la culture arménienne », a rapporté Arkun.

Suite à la page 6

Discussions bilatérales arméno-géorgiennes et développements régionaux



La réunion des Premiers ministres d'Arménie et de Géorgie, Nikol Pachinian et Irakli Garibachvili, a eu lieu à Batoumi, en Géorgie.

Les dirigeants des deux pays ont d'abord eu une conversation privée, puis les négociations se sont poursuivies dans un format élargi.

Les deux hommes ont souligné les liens historiques et culturels forts qui unissent les deux nations.

L'Arménie et la Géorgie visent à s'engager dans un dialogue de haut niveau sur des questions stratégiques, grâce à un engagement commun qui permettra d'insuffler un élan supplémentaire à une coopération efficace tout en contribuant à la paix et à la stabilité régionales.

Les contacts intenses qui témoignent du développement dynamique des relations bilatérales et du haut niveau du dialogue politique ont été soulignés.

Les interlocuteurs ont discuté de diverses questions et perspectives de la coopération entre l'Arménie et la Géorgie, ont fait référence à d'autres mesures visant à un développement et à une expansion cohérents de la coopération dans divers domaines. Ils ont échangé leurs vues sur la situation et les développements régionaux.

L'Arménie et la France abordent des questions de sécurité et de stabilité dans la région

Le ministre des Affaires étrangères d'Arménie Ararat Mirzoyan a eu une conversation téléphonique avec la ministre française des Affaires étrangères Catherine Colonna.

Les interlocuteurs ont échangé des vues sur les questions de sécurité et de stabilité dans la région.

Ararat Mirzoyan a informé son homologue français des derniers développements dans le processus de normalisation des relations arméno-azerbaïdjanaises. Il a fait référence aux questions clés du processus, en particulier à la délimitation de la frontière d'État entre l'Arménie et l'Azerbaïdjan, à la résolution des problèmes de droits et de sécurité du peuple du Haut-Karabagh dans le cadre du mécanisme international, ainsi qu'aux questions liées au déblocage des communications économiques et de transport dans la région.

Le ministre Mirzoyan a souligné l'inadmissibilité de résoudre les problèmes par l'usage de la force ou la menace de la force, la nécessité pour l'Azerbaïdjan de s'abstenir d'actions agressives et de rhétorique provocatrice.

L'urgence des efforts internationaux pour surmonter la crise humanitaire créée au Haut-Karabagh à la suite du blocus illégal du corridor de Latchine et pour empêcher de nouvelles actions visant au nettoyage ethnique par l'Azerbaïdjan a été soulignée.



Inquiétudes de Moscou sur la situation humanitaire dans le Haut-Karabagh et le blocage du corridor de Latchine par Bakou

Moscou est extrêmement préoccupée par les violations croissantes du cessez-le-feu dans le Haut-Karabagh et le blocus en cours du corridor de Latchine, a déclaré, le 6 juillet dernier, la porte-parole du ministère russe des Affaires étrangères, Maria Zakharova.

« Selon les informations disponibles, la situation humanitaire dans la région se détériore. Nous avons le regret de déclarer

Suite à la page 6



Réel danger de nettoyage ethnique pour la population d'Artsakh



Davantage d'efforts internationaux sont nécessaires pour empêcher le nettoyage ethnique de l'Artsakh par l'Azerbaïdjan, a déclaré le ministre arménien des Affaires étrangères Ararat Mirzoyan lors d'une table ronde tenue lors du seizième forum de Dubrovnik, les 7 et 8 juillet dernier.

Mirzoyan a noté que l'Arménie négocie avec l'Azerbaïdjan de bonne foi, mais dans le processus de négociation et sur le terrain, elle fait toujours face à des menaces et à l'utilisation réelle de la force.

« Nous avons un blocus du Haut-Karabagh. Nous avons besoin de plus d'efforts internationaux pour empêcher le nettoyage ethnique », a-t-il déclaré.

Selon Ararat Mirzoyan, « les habitants du Haut-Karabagh courent un réel danger de nettoyage ethnique ».

« Si l'ordre mondial dont nous parlons, dont nous rêvons, est basé sur des valeurs, alors l'humanité a une chance. Je le répète encore une fois : nous parlons de vies humaines. Nous parlons maintenant de troubles mondiaux, de violations du droit international, mais nous en parlons depuis 2020, lorsque l'Azerbaïdjan a lancé une guerre d'agression au Haut-Karabagh, après quoi il a envahi à plusieurs reprises le territoire souverain de l'Arménie », a déclaré le ministre arménien.

L'Azerbaïdjan bloque la vanne du gazoduc Arménie-Artsakh

Selon Artsakhgas, le niveau de pression du gaz dans le seul gazoduc Arménie-Artsakh a commencé à baisser, ce qui signifie que la partie azerbaïdjanaise a fermé la vanne du gazoduc. « Dans les prochaines heures, il sera clair d'après le niveau de pression du gaz si le prochain arrêt sera complet ou partiel.

« Avec un tel changement de situation, la société Artsakhgas ne fournit à nouveau le gaz accumulé dans le pipeline qu'aux stations-service, arrêtant les travaux pour rétablir l'approvisionnement en gaz des autres consommateurs. Dans tous les cas, nous demandons à tous les consommateurs de rester vigilants et de respecter les règles de sécurité lors de l'utilisation du gaz, car une certaine quantité de gaz a déjà été pompée dans la section du réseau domestique.

« Nous vous informerons des développements supplémentaires dans un message séparé ».

L'approvisionnement en gaz, qui avait été totalement interrompu depuis le 21 mars, a été rétabli le 8 juillet. Pendant les 210 jours du blocus de l'Artsakh, l'approvisionnement en gaz a été interrompu par l'Azerbaïdjan durant un total de 143 jours, indique le communiqué.



Les efforts...

Suite de la page 5

Les anciens prisonniers de guerre arméniens ont déclaré à Lapshin : « Les services de renseignement arméniens leur ont strictement interdit de communiquer avec des journalistes ou des militants des droits de l'homme. On peut supposer que si cela est vrai, cela est dû à la situation actuelle précaire de l'Arménie, qui fait

tout ce qui est en son pouvoir pour éviter une nouvelle guerre d'agression par l'Azerbaïdjan ».

Lapshin a déclaré à l'Armenian Mirror-Spectator que les membres de la communauté juive américaine ne soutenaient pas ses activités de défense des droits humains pour l'Arménie. Ils lui ont dit : « Pourquoi avez-vous besoin de traiter avec l'Azerbaïdjan, parce que l'Azerbaïdjan est en fait l'allié d'Israël. D'accord, vous avez eu une mauvaise expérience avec l'Azerbaïdjan, mais il faut penser

De nouveaux horizons pour la coopération entre l'UE et l'Arménie

